ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0010,ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. 511749

ԴԴ6-Ե-7553
ԵԿԴ/0119/11/12
«27» նոյեմբերի 2012թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի
նախագահ Ա.Սաքունցին/
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծ 59

Ուղարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2012 թվականի նոյեմբերի 23-ի որոշման պատճենը:

Առդիր՝ որոշման պատճենը՝ «2» թերթից,
վճռաբեկ բողոքը՝ կից փաստաթղթերով՝ «20» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Գ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԵԿԴ/0119/11/12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 նոյեմբերի 2012 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Է.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ա.ՕՀԱՆՅԱՆԻ

քննարկելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցը 2012 թվականի հուլիսի 30-ին բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել կատարելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի բողոքը մերժվել է:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի

գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցը՝ խնդրելով բեկանել այն և պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը կատարել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի $6^1$-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի առաջին մասի որևէ կետի հիմնավորումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ

4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Մինչդեռ Ա.Սաքունցի բողոքում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և դրանց հիմնավորումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը վերադարձնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ս.ՕՀԱՆՅԱՆ